



Հայրենեաց



TRAIN
WEEKLY
AN ARMENIAN WEEKLY.
27 Beach St., BOSTON
ՀԱՍԹՅ՝
AMERICAN HAI PUBLISHING Co

BOSTON, MASS.
Entered at the O
Boston, as Second - Class
Mail Matter.
Subscription \$1.50 a Year.

ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Զ. Դ.

Ուշագրութիւն մեր տեղագիտութեան և նոր հասցէին: Յորդանան, թղթակցութիւն և դրամ զրկելու հետեւեալ հասցէով միայն: ARMENIAN PUBLISHING CO. P. O. B. 1731 Boston Mass.

Ներկայ թիւէնկանալ ԱՍՅՆ-ՀԱՅ-ՐԵՆԵԱՑ կը հրատարակուի նորակազմ վարչութեան մը հոգածութեան ներքեւ: Այս առթիւ կը խնդրենք բոլոր այն բաժանորդներէն որոց կանոնաւոր թերթ չի զրկուիր հաճին փութով մեզ իմացնել իրենց ներկայ հասցէն. որպէս զի կարենանք թերթին կանոնաւոր առաքումը վերսկսել:

Մեր բոլոր թղթակիցներէն կը խնդրենք որ ջանան իրենց նամակները յատուկ և ամփոփ ոճով գրել, իրողութիւնները միայն արձանագրելով առանց իրենց կողմէ խորհրդածութիւն կամ կարծիք յայտնելու: Նամակ և յորդանան իրարմէ տարբեր բաներ են: Թերթին ծաւալը կը պարտաւորէ գմեզ խնդրել նաև մեր յաագելի աշխատակիցներէն որ իրենց յորդանանները որչափ կարելի է կարճ ընեն որպէսզի կարենանք հրատարակել բոլոր աշխատակիցներէն եկածները ու այսպէս նիւթերու զանազանութիւնը պահել:

Հայրենիք թերթը իր վերջին թիւին մէջ անխոհեմութիւնը եւ անձնականութիւնը ծայրայեղութեան հասցուցած կը թուի. առաջինը իր Պօլսական թղթակցութիւնովը, երկրորդը Պր. Գ. Զիթմեանի պատուոյն դէմ անամօթ նամակով մը: Մեզի անհատաւոր կերակայ որ Պօլսի բնակող և ինքզինք գոնէ յեղափոխական կարծող անձ մը այդ պարունակութեամբ նամակ մը զրկած ըլլալ արտասահման ուր լրտեսներու բանակ մը միշտ պատրաստ է հայ արիւնը շահագործելու: Դաւաճան մը աւելի վատ գործ մը չէր կրնար կատարել:

Պր. Զիթմեանի պատուոյն դէմ վայրագ յարձակումը այնքան գոհնակի ու անիրաւի է որ կը զարմանանք թէ ինչպէս Հայրենիք հիւրանկալած է այդ անխիղճ գրութիւնը:

Չայն-Հայրենեաց ինչ կրօնական դաւանանքի կը պատկանի կը հարցընեն ոմանք: Այս հարցման մեր պատասխանն է. — Չայն-Հայրենեաց կրօնական դաւանանք չունի. սա պարզ պատճառաւ որ կրօնական թերթ չէ ան: Անկեղ ծուրիւնը կը յարգենք կրօնական բոլոր դաւանանքներու մէջ, խղճի ազատութեան բացարձակ հաւատացող ենք: Մեր հաստատ համոզումն է թէ, կրօնական

տարբեր հայեացքներու պատճառաւ գիրար ատել ու անարգել դատաւարտելի անկողութիւնն է: Առթիւ պիտի ունենանք սակայն երբեմն այս էջերուն մէջ հրատարակել ուսումնասիրութիւններ կրօնի ծագման և բաղդատական կրօնագիտութեան մասին՝ այն հաւատքով թէ, հոգին նոր ճշմարտութիւններով կ'անանի ու ոչ թէ հինգած աւանդութիւններով:

Չայն-Հայրենեաց ամէն բանէ առաջ պիտի թերթ մը է, բառին լայն իմաստովը: Ձատագով պիտի հանդիսանանք այն ամէն ձեւերակներուն և շարժումներուն որ հայութեան զարգացման և բարեօրոյնի կը նպաստեն:

Հայրենասիրութիւնը չենք սահմանափակել յեղափոխական բառին մէջ, մանաւանդ այն շատաթան յեղափոխութեան՝ որ ազգին պատուհաս դարձաւ, և զոր ցարդ կը շահագործեն պնակալէզ խաչագողներ: Կզգանք թէ հայ ազգը արմատական յեղաշրջման կարօտ է. մը. տաւորապէս և բարոյապէս. գործ մը որ արդէն սկսած է ու պիտի շարունակուի և որուն մէջ Չայն-Հայրենեաց ալ կը յսուսայ իր խոնարհ դերը ունենալ:

Խորագիտ համոզուած ենք թէ ամէն շարժում-կրթական, առևտրական, գեղարուեստական, բարոյական և կրօնական իր մասնաւոր դերը ունի ազգի մը կենսաբան զարգացման մէջ, ու չենք կրնար արհամարհել մին կամ միւսը՝ առանց վնասելու այն բազմակողմանի մշակութեանը որուն պէտք է տիրանանք անհատաբար թէ՛ ազգովին: Միւս կողմ մէն ամէն պաշտօն եւ հաստատութիւն պէտք է դատուի անոր ազգին մատուցած ծառայութեան չափովը: Այն պաշտօնները կամ հաստատութիւնները որոնք իրական ծառայութիւն մը չեն ընծայեր հանրութեան և որոնք սակայն հանրութեան վրայ կ'ապրին՝ կը կոչուին Մակարոյ՝: Ժողովուրդը իրաւունք ունի այս սեսակետով դատելու իր դաստիարակները և վարժարանները, եկեղեցականները ու եկեղեցիները, վանքերը և աթոռները, չմոռնանք յիշել, հայրենասիրական կազմակերպութիւնները:

ՀԱՅ ՄԱՍՈՒՆԻԸ
Թիֆլիսի Հայ Հրատարակչական Ընկերութեան ջնջումը ծանր հարուած մ'է հայ լեզուին ու գրականութեան, թուրքոյն հայոց ներկայ քաղաքական կաշկռնեայ վիճակը և նիւթական անտանելի գրութիւնը դրէթէ անկարելի կընեն այդ երկրի հայ մամուլէն ունէ կարելու արտադրութիւն սպասել: Երկար ժամանակէ ի վեր Պօլսի ու իջմիր երբեմնի գրական կեդրոնները զիրք կոչուելու արժանի հրատարակութիւն մը հրապարակ հանած չեն, միայն լրագրե-

րն են որ աննման կորովով իրենց գոյութիւնը կը շարունակեն իսիստ անըպատ պայմաններու տակ: Ամերիկայի հայոց զբաղարաններու ցուցակին մեծ մասը կը կազմեն Թուսակայ Հրատարակչական Ընկերութեան գրքերն: Այսօր երբ այդ աղբիւրն ալ կը ցամաքի, ընական է հարցնել թէ ուս կից պիտի սպասենք նոր գրքեր ու տետրակներ: Դրժբարտութիւնը շատ մեծ է մեր աղքատիկ գրականութեան համար, ընթերցանութեան ճաշակը հազու սկսած էր արթննալ և ահա գրքերն են որ պիտի պահարին: Հասարակ ընթերցող մը մի քանի ախտան միջոցին կրնայ կարգալ գրադարանի մը բոլոր գրքերը, անկից վերջ. կրկին դիմելու է խաղի թուղթին կամ գարնընուրի գաւաթին զրօսելու համար:

Գրքերու պակասը կրնայ չափով մը լեցունել մեր պարբերական մամուլը, թէև օրաթերթը կամ շաբաթաթերթը թիւ ատեն կրնան ննայուն և տնային գրականութիւն արտադրել քանի որ օրը օրին կ'ապրին և օրուան խնդիրներուն վրայ հարեանցի տեսութիւններ միայն կրնան պարունակել ընդարձակ և խոր ուսումնասիրութեան առիթ չունենալով: Կարելի է՞ սակայն հայ մամուլը յարմարունել ներկայ պայմաններուն և այն դիրքին մէջ դնել որ ընթերցանչ հասարակութեան յուրերու, օրուան դէպքերու և խնդիրներու ծանօթութեան նկատ տայ նաև մտաւոր և քաղաքական սնունդ: զեղազիտական զգացումներ և գրական բարձր ճաշակ: Ամէն բան այսպէս լրագրէն յուսալ թերևս ներքին չէ, պէտք է փորձել արտասահմանի հայաշատ կեդրոնները հրատարակչական ընկերութիւններ կազմել, գրքեր հրատարակել ժողովրդական գներով: Ամերիկայի հայերը մանաւանդ պարտաւոր են աւելի լուրջ ձեռնարկներ ընել այս ուղղութեամբ, բայց քանի որ դեռ այս իրականութիւն դարձած չէ մեծ պարտք մը կը ծանրանայ հայ մամուլին վրայ մանաւանդ արտասահմանի մէջ: Որքան տխուր է իրողութիւնը այսօր, լրագրեր սունկի պէս կը բուսնին հոս ու հոն, փայլուն խօստուներ, աւելի փայլուն անուններ: սակայն ի՞նչ պարունակութիւն: Արտասահմանի հայ մամուլին մէջ մասը արտադրեց այնպիսի աղտոյի էջի որոնց նմանը կարելի չէր գտնել հայ լեզուին մէջ, ախտոս որ դեռ աղատութեան վարժուած չենք: Փոխանակ ժողովրդին միտքը կրթելու զգացումները ճաշակը աշուտացնելու, մամուլը իջու ամենէն ցած դասակարգի աստիճանին, սրճարանի, ճաշարանի թուղթ և թավու խաղողներու լեցուն և զաղափարները փոխ առաւ, ալ մնա բարով կրթութիւն, ճաշակ քաղաքավարութիւն. տիղմ, հայհոյանք, կուր, ասոնք դարձան մեր մամուլին օրակարգը: Կուսակցամոլական զին, անձնական թշնամութիւնը, կիրքը և ատելութիւնը այսօր հրապարակ ելած են: Ինչ որ գոհնակի մը փոփախով պիտի ըսէր իր ընկերով. այսօր խմբագիրը հրապարակու կը պոռառանց ամշնալու իր ընթերցողներէն. ա՛յս տեսակ մամուլէն է որ պիտի սպասենք ժողովրդային վերածնութիւն, քաղաքական անկախութիւն:

Ամերիկայի մէջ հայ դաղթականութեան արժանի և պատուաւոր մամուլի մը հաստատութիւնը շատ մը սրտերու հզօր տենչը եղած է երկար ժամանակէ ի վեր, շատեր ալ այդ նպատակին համար նիւթական և բարոյական մեծ գոհողութիւններ բրած են, բայց մինչև հիւս փորձերը անյաջող ելած են: Պատճառը որոշ է. մինչև իսկ փոքր ծաւալով լաւ շաբաթաթերթ մը հրատարակելու համար մի քանի անհատներու ջանքերը շատ անզօր են: Իր կոչումին գիտակից, ժողովրդին սրտին և զգացման մօտ, մտքին ու գաղափարներուն առաջնորդող թերթ մը հրատարակել ծանր աշխատութիւն մը է որուն պէտքէ մասնակցի ինքը հասարակութիւնը իր հանրային կարծիքով ու բարոյական աջակցութեամբ: Մեր մէջ զրողները նիւթական վարձատրութիւն չեն կրնար ակնկալել, միայն օգտակար ըլլալու տենչն է իրենց շարժառիթն. եթէ ժողովուրդը իրապէս օգտուի այդ ջանքերէն զբարական մշակներու թիւը եւ կարողութիւնը կը կրկնապատկի:

Խմբագիր և ընթերցող ուրեմն միացնելու են իրենց ջանքերը: Լրագրութիւնը ժողովրդին հայելին է: Ամերիկայի հայութիւնը թող ջանայ հոն դեղեցիկ պատկեր մը ցուցնել, լրագրերը հասարակ կարծիքին արտայայտութիւնը և առաջնորդն է, ջանանք այդ կարծիքը անաչառ ու անկաշառ պահել խղճի պէս: Մեր հասարակութիւնը պէտք ունի մտաւոր և բարոյական սնունդի, փորձնք ուրեմն թերթերու միջոցաւ գիտութիւն ծանօթութիւն տարածել, ուսումնասիրենք կարևոր խնդիրներ և եթէ կարծիքներով իրարմէ տարբերնք ալ չմոռնանք թէ իրեն նոյն թշուառ հայրենիքի զաւակներ պարտաւոր ենք զիրար սիրել և միասին գործել մեր տարբարախ ազգի բարոյական և քաղաքական փրկութեան համար: Տգիտութեան և մոլութեան լուծը քաղաքական գերութեան շղթաներուն շափ ծանր է ժողովուրդի մը սրտին վրայ:

Ա. Տ.

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒՒ

Ամերիկայի Հնչակեաններու պատգամաւորական ժողովին կողմէ առաջարկուած ազգային Համաժողովը ընդհանուր համակրութեան արժանացաւ իրբեւ ժամանակին կարևոր պէտքերէն մին, և իբրև նախնական քայլ մը ազգային համերաշխ գործակցութեան: Ունէ հասարակութեան մէջ անպակաս չեն, սակայն, անձեր որոնք խժեթանքի առիթ կը փնտռեն և որոնց նշանաբանն է կարծես— «Ես կամ ոչ ինչ»:

Հայրենիքի մէջ Ա. Վ. ստորագրութեամբ մարդ մը մասնաւոր իրարանցում մը կը ցուցնէ այս մասին: Կիմանանք թէ Ա. Վ. Դաշնակցական մ'է, ինչ որ շատ յայտնի էր իր մողեզին յարձակումներէն Պր. Ա Արփիարեանի դէմ: Կերևի թէ մեր Դաշնակցական եղբայրներն ալ, զէթ անոնցմէ ոմանք, հիմա պատմական դարձած Հնչակեաններուն նման իրենցմէ դուրս բարի բան չտեսնելու կուրթութեան բռնուած են: Տխուր ճշմարտութիւն մը ասիկա— Անգամ մը թուր-

քրոյ Բ. քաղաքին մէջ կարևոր խնդրոյ մը համար թաղական ժողովը կը գումարուրուի: Ատենակապետը կը խնդրէ ժողովականներէն որ իւրաքանչիւրը կարգաւ իր սեպակական կարծիքը յայտնէ առաջարկուած խնդրոյն վրայ: Պատ. կիրակոս կարգը ձեռն է կը յայտարարէ, Ատենակապետը խօսքը ուղղելով ժողովականի մը որ սկսեր էր մրափել: Կարծեմայ ըստնէն և աչքերը շփելով—«Պր. Մանգակունիի յայտնած գաղափարին հակառակը կը պնդեմ» կը բացագանչէ—«Պր. Մանգակունիի կարծիքը լսուած չէ դեռ, կուզէ Ատենակապետը—ինչքիւր չէ, անոր յայտնելիք գաղափարին տարակարծիք եմ վերջապէս:

Կը կարծենք թէ Հայրենիք խմբագրական պարզ օրէնքի մը հպատակած պիտի ըլլար եթէ համաժողովը և անոր նպատակը խորհելէ առաջ, հրաւերը ամբողջութեամբ հրատարակէր, որպէս զի իր ընթերցողները գիտնային թէ ինչ էր և որ կը քննադատուի: Ունէ գրութենէ մը ըստ հաճոյս նախադասութիւններ անդամակալու կատոնական հովեր առնել՝ ու այդ մեծաւ մասամբ անձանթ (ընթերցողներուն) թուղթին պարունակութեան ու նպատակին վերաբերմամբ պատգամներ որոտով ուրիշ բան չի նշանակելու բայց եթէ ընթերցողներուն մտաւորական կարողութիւնը հնգանի:

«Պատշտական հրաւեր» բացատրութիւնն է որ կը քաջըլուի: Պատշտական հրաւեր չկայ: Համաժողովին հրաւերը պաշտօնական է այն իմաստով միայն որ մարմինը կողմէն կուգայ, և ոչ այն իմաստով որ հրաւերին մէջ թելադրուած խնդիրները ունէ պարտաւորութիւն կը դնեն համաժողովին վրայ այդ նոյն թելադրութիւններուն հետեւելու:

Հնչակեան Պատգամաւորական ժողովը Համաժողովի մը գաղափարին համակրած և իրեն յարմար երեցած կերպովը հրաւեր մը ուղղած է Ամերիկա-րենակ ընդհ. հայութեան այդ գաղափարը իրագործելու: Պատգ. ժողովը ոչ պաշտօն և ոչ յաւակնութիւն ունէր Համաժողովին օրակարգը վերջնապէս կարգադրելու և ժողովուրդին հրամայելու որ զայն ու այդ օրակարգը գործադրէ:

Ասիկայ նոյն իսկ Համաժողովին գործն է ինչպէս պարզուած է հրաւերին մէջ ալ. ոչ ոք կրնայ ըսել սակայն թէ Պատգ. ժողովը իր առ ունէ չունէր նախաձեռնարկ ըլլալու: Այս իրողութիւնը կը ցուցնէ, ուրախ ենք ըսել թէ Հնչակեան կազմակերպութիւնը ինչ ուղղութեան կը հետեւի, և ինչ իմաստով կը մտնէ իր հայրենասիրական պարտաւորութիւնը:

Կենսական խնդիրը սա է: Ամերիկայի ընդհ. հայութեան ներկայացուցիչներին կաղումած ազգային համաժողովը մը օգտակար է թէ փնտրակար: Այսպիսի համաժողովը կամ համաժողովներ ազգին տարբեր տարրերուն մէջ գործակցութեան և համեմատութեան նախաքայլեր են թէ ոչ:

Որքերու, սովետներու, բանտարկուածներու համար ինչ ըրած են համաժողովին հակառակողները: Մէկ խօսքով ազգի մը զանազան պէտքերը անհատական թէ հաւաքական ջանքերով կրնայ լաւագոյնս հայթայթուիլ: Ինչո՞ւ կուսակցականներէն ոմանք կը փորձեն արհամարհել ժողովուրդին ձայնը, ժողովուրդին պահանջները, ժամանակին պէտքը:

Ուրախութեամբ կարճանազանք թէ Համաժողովին գաղափարը արդէն ամէն կողմ շերտ ընդունելութիւն գտած է հակառակ անխմայ խորհմանքներու: Ժողովուրդին կը մնայ կանոնաւոր ժողովներով և լուրջ վիճարանութիւններով կազմակերպուելու այդ ժողովը յաջող փայլուն և օգտակար ընելու:

ԹՈՂ ԴԱՏԷ՞ ԺՈՂՈՎՈՒՐԻԸ

Ատենէ մը ի վեր է որ Դաշնակցական մարդուկներ ու թերթիկներ ինծի բարոյական հարուածներ տալու մղելքին փորձեր կը կատարեն: Յաւ ունին: Երաւի թէ հարուածը փոխարինէն այնպէս

ինչպէս կերած են, գործածելով Ազնիի Չէնթ:

Ինքզինքը «Հայրենիք» յորջորջուող թերթիկին մէջ Լէօ ստորագրութեամբ գրական աղբակոյտին պատասխանել չեմ գիշանիր. անոնց պատասխանելու արժանի կերպին պիտի դիմեմ: Խօսքս հայ հասարակութեան է: Ձեզմէ խիստ քիչերը կարգացին գրական աղբակոյտի «Շարժում» լրագրին մէջ Դաշնակցականներու իմ հասցէիս ուղղած անամօթ հայհոյանքները, որոնք մոյեզնութեան փրփուրներովը բարձրացան մինչև իմ պաշտօնի Տիկնոջ անարատ պատուոյն: Իր թէ իմ Տիկնոջ ալ իմամ է կարծիք օրերուն մէջ ընձարարութեանց այն դառն բաժակէն՝ որմէ բարէ՛... Խմցին մեր անարատ կոյսերէն ու քոյրերէն հազարաւորներ: Ընդունինք վայրկեան մը, թէ անուանարկուած արդէն պատահած ըլլար իմ տիկնոջս սը ճշմարտիւ: Ինչ մի՞թէ հայեր, հայ թերթեր, հայ «Յեղափոխականներ» նախատիք. անարգանք. ծիծաղ ու քրքի՛ք արձակելու էին անոր. և անոր հետ ըրողը հայ կոյսերուն ու տիկնանց վերջովեալ հոգիներուն և կոտորած սրտերուն: Ա՞յդպէս պիտի մխթարենք մեր կենդանի նահատակները, որոնք արդէն ինքզինքնին վայրագ թշնամիին արիւննակի ձեռքերով փորուած անարգանքի խորխորատին յատակը կը գտնեն. անտէր և անօգնական ու լքուած...: Որքան ևս առաւել նողկալի կը հանդիսանան այդ «Յեղափոխական» կոչուող Լօթիները. երբ կորագը Չայն Հայրենեացի ներքին թիւնոյն մէջ ազն. Տիկնոջ Մ. Հայկանուչ Չաքարեանի նամակը, որ իրը ականատես վկայ կը բողոքէ այդ անհիմն յերբարանքին դէմ ու ի հանդէս կը բերէ ոչ միայն անարատ կենսքը այլ նաև մաքուր և դիւցազնական ոգին իմ տիպար առաքելի տիկնոջս:

Մեր քիթը կախ դրկիցը և իրեն վայել իմազարի Լէօն ինծի հայհոյելու մոլեզունութեան մէջ չյազենալով, զուխնին կը բերեն մինչև կերակուրիս ամանին մէջ կը մխթեն. — Ինչ կուսեմ... Ինչ կերպով կը ճաշեմ... այն է հարցը որով հայութիւնը պարտի զբաղել չհայ թերթեր էջեր նուրբու են այդ կենսական չհարցին — գոնէ՛ այդ պատահական ցընդած նախատիքը յերուրուելուն տեղի տուած ըլլալու համար հայկական ճաշքարան յաճախելու սովորութիւնը ունեցած ըլլայի... կարծե՞ք այդքան ցած անուանարկութիւն մը օրու ան նիւթ ընել ու հերքել: Եթէ նոյն իսկ ճիշդ ըլլար եղած անուանարկութիւնը, այդ բանը ինքզինք յեղափոխական կոչող թերթի մը մէջ ինծի պատիւ համարուելու էր՝ ու ո՞չ թէ նախատիքի: Մի՞թէ Դաշնակցական ըմբռնւմը ընտելով յեղափոխական, կամ հասարակական սասպարէզը ուտելու, յղիմանալու, սովորականէն աւելի ՌՈՃԻԿ ստանալու, հարստանալու, լահալմանա՞ն մի է... ո՞վ չգիտեր որ ես իմ ներկայ նիւթապէս ո՞չ նախանձելի վիճակիս մէջ մտած եմ կամաւ դիւրեւալստուն, 800 տօլարի տարեթոյնի ձեռքով և 1000 տօլարի խոստումը առ ոչինչ անհրկով. ո՞վ չգիտէր թէ, եթէ ես ալ մի՞միայն կրօնական խնդիրներով պարապէի, եթէ ազգային օրուան պահանջներուն սը նշաններուն առջև անտարբեր կենայի, եթէ կըզիմանայի հացիս խնդրոյն մէջ, եթէ ապառիկ ճաշելէ, անօթի մնալէն վախնայի՛ եթէ, նոյն իսկ, այդպիսի յեղափոխական անունին նախատիքը եղող խորտիկաններու կողմանէ նիւթական տեսակետէ ինծի նետելիք անարգանքները հաշիւի առնէի՛ այն ատեն ես ալ սովորական համակերպութեան մէջ գլուխս քաշած՝ պարտաւոր պատաններով փորս պարտապաններուն կը նայէի: Ու ո՞չ ապաքէն այդ կարգի նախատիքները ըսկըզուցով հայհոյանք են ուղղուած մեր այն պաշտելի նախնեաց՝ որոցմէ ոմանք անօթութիւննէ իսկ մեռած են: Իմ գծուծ և տխմար հակառակորդներու սկզբունքի դաւաճանութեան այդ աստիճան պըզգալի ճահիճներէ անունիս ցնի նետելու զիջանիւն ինքնին չըցուցներ թէ, անոնք ինծի դէմ յարուած ստալոյնութիւններուն իրենք ալ չհաւատարկով՝ դէթ՝ այդ օրինակ խեղակորոյս յարձակումով՝ մը

ինծի դէմ ունեցած վէրքերին քերելու ողբալի փորձը կատարեր են:

Երկու տարի իմ անձնական ծանր գոհողութիւններու վրայ հրատարակուած են երկու իրարու յաղորդող թերթեր. այդ ժամանակամիջոցին մէջ նիւթական շատ տաքնապներ անցուցեր եմ. դիւրին բան չէ հայերուն թերթ ծախելով շարժական 30 տօլարի ծախք մը գոցելը. այդ շատ նեղութիւններ կրած եմ. որոց վրայ ամշնալու տեղ հպարտանալու իրաւունքը ունիմ: Ես ինչ նախնեաց մէջ անօթի մեռնողներ ալ եղած են. ու Դաշնակցականներ այդ գաղափարի զոհողութեան այդ սրբութիւնը արհամարհելու ելեր են:

Հրաջ պիտի ըլլար եթէ այդքան մոլեգանած հակառակորդներս կիրքի այդ չափազանց կուրուրեանք մատուցելէն ետքը կարող ըլլային իմ վրաս, իմ մասին աղէկ բան չէ շիտակ բանմը տեսնել. ո՞վ զիտէ ամեն գիշեր ինչ խոսովայոյց եներգներ կը տեսնեն իմ վրայովս ազգասիրբար...:

Ըսի թէ դրացի թերթին վերջին թուոյն գլուխ գործոց գրական աղբակոյտին չպիտի պատասխանեմ. սակայն հայ հասարակութեան ցուցնելու թէ այդ ստորին բարբեր ինչպէս ճշմարտութեան անունին տակ ամենախայտառակ զերպարտութիւններ կը քնեն. սա Ե. Եպիս կոպուսի դրամին խնդիրը պարզեմ իր նմոյշ — Հակառակորդներս հրատարակեցին թէ ես Ե. Եպիսկոպոսի համար հանգանակածս գումարէն միայն 10 տօլարնոց ժամացոյց մը և գրքանի գմեւին մը դրկեր եմ նորին արագիւնութեան: Ահա իրողութիւնը — Ե. Եպիսկոպոսի համար հանգանակած եմ 200 տօլար. դրկած եմ իրեն ոսկի ժամացոյց մը 65 տօլարի, գնողն է Պր. Մանեան Բրուտեան Ուստը. դրկած եմ 30 լիբրայի փոխ գիր մը Պ. Մարտիրոս Կահիկեանէ Ուստը. 3 տօլար ծախսած եմ փորագրութեան մը համար: Անուանակեր ստացած եմ, որոցմէ մին նյարի կը գտնուի Արթ. Մալթոց վարդապետի քով. ուր զանազան պարագաներով Ե. Եպիսկոպոս կը յայտնէ իր այն ժամացոյցին ու 30 լիբր փոխ գրին ստանալու ու վէճ. Հայրիկի միջոցաւ փոխ գիրը Կ. Պոլսէն գանձելու: Այս դրամը հանգանակուած է Ուստի մէջ և անոր մասին հարկ եղած գոհացումը տրուած է հրատարակչին մեծ ժողովի մը առջև: Որովհետև Ուստիին թոփանելեան զառամեալը Պոլս գրած ու մասնած էր Ե. Եպիսկոպոսին ժամացոյց ու դրամ դրկելու: Վերջնայն հանգիստը չվերջովելու համար չէի կրնար հրապարակաւ ամէն բան յայտնել. ուստի ժողովուրդէն խնդրեցի որ երկու ամենահաւատարմի մարդիկ ընտրեն զրկեն ինծի որոց-ցուցնեմ դրամը ինչպէս գործածած ըլլալու վաւերագրերը. եթէ գոհ ըլլան յաջող ժողովին միայն իրենց գոհ ըլլալը յայտնեն. իս եթէ գոհ չըլլան՝ ըսեն թէ գոհ չեղան՝ որ ատեն ժողովուրդը ազատ ըլլայ զիս դատաւարելու ինչպէս որ ուզէ: Ըստ իմ առաջարկին ընտրուեցան Տիւրք Յովհաննէս Եղաճեան Խնուսցի և Աւետիս Ժամկոչեան Կիրիլիցի. որոնք եկան տեսան վաւերագրերս ու հաշիւներս ու յաջող ժողովին՝ միասին ժողովուրդին առջև կանգնելով յայտնեցին իրենց բացարձակ գոհունակութիւնը:

Ամբողջ ութը տարիներ անցած են այդ խնդիրներուն վրայէն ու այս օր վրէժխնդրութեան մը ժամը հնչելուն՝ երևան կը հանուի ինչպէս. ալ ժողովուրդը թող դատէ ոչ ու շարժառիթը դուարձալի հակառակորդներու, որոց ը սելիք վերջին խօսքս հետեւեալն է. — «Չափէն աւելի եռացող գիտին իր կարաստ կը ճախցուցնէ»:

Գ. Պ. Չիթճեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Փրովիտեսն Օգոստ. 24 1900

Ասիկց առաջ քանի մը անգամներ թերթերու մէջ տեսած էի Պր. Գ. Չիթճեանի մասին եղած անհաճոյ դիտողութիւններ. բայց առանց հետաքրքրուելու

կանցնէի, որովհետև ոչ մէկ կողմէն բանի մը տեղեկութիւն չունէի:

Յուլիս ամսուան «Շարժում» թերթի 243րդ. թիւը վրաս խիստ տարօրինակ տպաւորութիւն մը ձգեց: Թէև Պր. Չիթճեանի մասին գրուած այս կտորն ալ որևէ վերաբերութիւն ունէր ինծի, սակայն հոն տեսնելով սեռիս ամենէն առաքելի և ամենէն աղնիւ մէկ անհատին ուղղուած անիրաւ հարուածներ. փափաքէ՛ աւելի պարտականութիւն մը զգալէ՛ ո՞չ թէ պաշտպանել Տիկնոջ Չիթճեան ալ հրապարակ զնելու իմ աչքերով տեսած ու ականջներովս լսած իրողութիւնները:

Նախ Տիկնոջ Չիթճեան կոտորածի ժամանակ թերթը պաշտօնէի պաշտպանութեան տակ երբէք ապաստանած չէ, ինչպէս յիշեալ յօդուածին մէջ անիրաւուած էր շարաշար. ալ, ինչպէս հայերու մեծ մասը դարձող տղայոց ու աղջկանց հետ, կէսմը մզիկներու և Լէսմը խաներու մէջ պատասխանէ Գիտնոյ Տիկնոջ Չիթճեանն ու իր կենսը ու իր երեք տղայներուն հետ միասին կը գըտնուէր այն խանին մէջ ուր 600 շափ հայեր բանտարկուած էին: Հոն խոնարհ փոփոխած պատերու տակ և չոր գետնին վրայ, առանց լաթի կտոր մը իսկ ունենալու՝ ծնրաջիւր տարածուած՝ անո՞վ ու զո՞րով վերջին զալիքին վրայ կը մտածէինք: Այդ սոսկալի պահուէն Տիկնոջ Չիթճեան տխուր դէմքով՝ իսկ քաջարի սրտով, ամենքիս քով կայցեց իմ թիւթաւութիւն, յոյս ու խրախոյս ներշնչելու: Երբ շատեր իրարու խորհուրդ կը հարցունէին և յուսահատութենէ և վախէ մղուած՝ կորչէին թիւթաց սպառնալիքներէն ազատելու համար, առ երեսը ընդունել մահմետական կրօնը. Տիկնոջ Չիթճեան արտասուք թափելով կըսէր «Ինչ կըսէք եղբայրներս ինչպէս ուրանանք մեր լոյս հաստը. չէ՞ք ինչեր ո՞րքան յարգանք մատուցեր ենք նահատակաց յիշատակներուն. ահա մեր ալ նահատակութիւն փառաւոր ժամը հասած է. մեր նախնի պաշտելի նահատակներուն հոգիները վերէն մեր վրայ կը նային, կաղաչեմ՝ եղբայրներ և քոյրեր մի վախեալ. կուրծք բացէք սուրբի դիմաց, թափե՛ք մեր արիւնը մարտիկի արիւնի անվերջութեամբ, ահա երկինք իր անմահութեան արշալոյսով լուսադարեւած դռները բացած է մեր առջև: Այս մտէ պիտի խոնարհուին հոյրին, ինչո՞ւ կուզեք անմահութիւնը մեզի կսպասէ, չվախնանք մահէն որ անմահութեան դուռը կը բանայ մեր առջև...»:

Տիկնոջ Չիթճեան երբ իր աչքերը իր փոքրիկ մանչերուն վրայ դարձուց եւ տեսաւ որ կուսային անոնք. գրկից դանդաղ ու ըսաւ «Ինչ կայ, ինչու կուզեք քաղցրիկ գաւակներս. ես ալ ձեզի հետ եմ. դուք պղտիկ նահատակներ պիտի ըլլաք»:

Ահա, այսպէս. Տիկնոջ Գ. Չիթճեան թերթի պաշտպանութեան տակ շրջապատ ընդհակառակն՝ իրմէն տարիքատներու և զօրաւոր երիտասարդներու խըրխոյս կը կարգար. հոն՝ ուր նոյն իսկ բողոքական քարոզիչներ քրիստոնէական հաւատքը ուրանալու սև միտքը կը յայտնէին:

Երկրորդ, այն քանիմը յեղափոխական կոչուած պարտները, որք ինքզինքնին բանիմը տեղ դրած՝ իրար անցած էին, շուկային մէջ հպարտութեամբ յոխորտալով զէնքերով կը պտտեն, վայտցողները ապուր կը կոչէին և ինքզինքնին ազգին «Փրկիչ» կը յայտարարէին, ահա նայն անոնք էին որ կոտորածի ատեն ստուերներու պէս անհետացան. անոնք էին որ թրքաց արիւնները և հաւնոցները ապաստան կը փնտռէին. էֆէնտիւններու և միւֆթիներու առջև թեմեն լահիներով շողմուրթիւններ կը կատարէին — ինչ, միթէ յանցանք մը, կամ մեղք մը պիտի ըլլար, եթէ փափակ սեռէն տկար անօթ մը նոյնը ընէր. իր անձին պաշտպանութիւնը փնտռէր: Զը մոռնամ զսեւու թէ թրքաց հովանաւորութեան տակ ծածկուողները քաղաքի հարուստներն էին. հասարակ դատակարար թերթի տուն չէր ընդունուէր. մեծ կաշառք տալու անկարող ըլլալով:

Կոտորածի մանրամասնութիւնները պատմել չէ նպատակս... Կոտորածի մանրամասնութիւնները պատմել չէ նպատակս...

ազատելու: Ֆրանսական կառավարութիւնն ալ պարտաւոր է Ամերիկայի պահանջին պաշտպան կանգնել... Գ. Տէլքաստ պիտի համարձակուարէր...

Հիր թէ կատարել մէկը կայ: Ամէն ոք իւր պարագային ու վիճակին համար...

Շարունակելի ԱՂԳԱՅԻՆ ԳՐՈՒՆԻԿ

Որովհետեւ մէկ ազգային ժողով մը տեղի ունեցաւ անցեալ կիրակի, ժողովը բացաւ հողաբարձութեան ատենագրութիւնը...

Թեմիս Նիուպոլիս քաղաքի մէջ ամսոյ 19 ին տեղի ունեցաւ բնիկ ինքնաշարժի Պր. Գրիգոր Թադէոսեանի պատկառելիութիւնը...

Այս առթիւ յանուն Հայաստանի թշուառ որոց մեր կողմանէ բացուած հանգանակութիւնը շարունակելով արդիւնքը եղած էր...

Ուստի յանուն ծնողազուրկ որոց մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով ազնիւ նուիրատուաց մամք աղօթարար

Սաղ Վարդապետ

Նիւ-ԵՕՐԻ

Երեկ տեղի ունեցաւ Ազատ լսարանի ներկայ տարւոյ երկրորդ ժողովը իր սովորական ժողովարարական մէջ ուր յետ Պ. Ղ. Պոյաճեանի ճառասուտութեան ընտրութեան նոր վարչութեան անդամները որք են— Պրք. Ե. Տ. Ստեփանեան, Մ. Թաշճեան, Պ. Ա. Գարրիշեան, Մ. Ֆէրրահեան, Կ. Գնդուհի, Մ. Միւնասեան և Ղ. Պոյաճեան:

Երեկ նաև վերջ գտան Բերրիի Ուսումնասիրաց ընկերութեան անդամոց վեճերն ու ամիսներէ ի վեր այդ ազգօգուտ կարգադրութեան գոյութեանը կրկնապահանջները: Երկու տարեկան ժողովներու մէջ, ի ներկայութեան Տ. Մ. Վարդապետի և Տ. Սյւլայանցիի ու Տ. Արշակունիի, որոնք ազգասիրաբար դատաւորի ծանր պաշտօնն յանձն առած էին, երկուտեք լուծեցան: Ի գոհացում մեր անոնց որոնք կամբաստանէին Պ. Յ. Չազմազեանի գործարարներին մէջ ըրած կարգ մը զրկանքներուն և ընկերութեան մէջ յարուցած խռովութիւններուն համար, վճռուեցաւ որ յիշեալ պարոնը մէկ շրջան ընաւ վարչութեան շտաբի ընկերութեան մէջ առանց անդամակցութեան զրկուելու:

Յետոյ ընտրուեցաւ նոր վարչութիւն մը որուն անդամներն են Պրք. Գ. Գորրիշեան, Յ. Հայրապետեան, Յ. Չատեան, Գ. Նալպանդեան և Յ. Կորեան: Կարգը եկաւ Բաշազապետներուն: Արդեք ատենը ալ Հասարակ զովմուտութիւնը պիտի ունենան վերջ տալու անհատական կերպերու շահատակութեանը և եսամոլութեան շարքիներուն:

Իրացի

— Ձէյթունի մէջ Օգոստ. 9 ին հրդեհ մը ծագեց, որ երեք ժամ տևած է 16 տուն այրելով: Հրդեհին առաջը առնելու համար ուրիշ շատ մը տուններ ալ փրցուեցին: Ամբողջ կորուստը 1050 օսմ ոսկի կը հասնի: Այս պատճառաւ բազմաթիւ ընտանիքներ անպատասխար ու թշուառ մնացին: 116 ընտանիք լեռներու մէջ կը բնակին տուն տեղ չունենալուն համար:

ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼՔԱՆԸ

Վերջերս Չոր. Ալի փաշան, իր տիրոջ Ապտիլը Համիտի հրամանաւ, յետադիմականներ ձերբակալելու պատրուակաւ Համիտի հետ զուգորդ մը ինկաւ Պիթիսի նահանգին մէջ Սպարդանք գիւղին վրայ: Նախ անուր շարժարաններու ենթարկեցին բնակիչներէն շատերը, որոց մէջ կար յղի կին մը. յետոյ գործը աւելի կտրուկ կերպով մը վերջացրին: Համար կրակի տուին ամէն բան մեռելներուն թիւը կը զանազանուի, 10 ըստ թուրք պաշտօնական աղբիւրի, որուն մեր «ուզդամիտ» Ֆիկարտի հաւատը կը ընծայէ: 200 Անգլ. հիւպատոսներու տեղեկութեանց համաձայն. և 600 ըստ Հայկական աղբիւրներու: Այս վերջին թիւը ամենէն հաւանական է:

Ալի փաշայի կողմէ պալատը ուղղեալ տեղեկագիրը կը վերջանայ հետեւեալ սովորական բանաձեւով: — «Տալը Հայքը սպանուած և ութը հոգի այ ողջ բնուած ըլլալով՝ շնորհիւ վեճ. սուլթանին այժմ խաղաղութիւնը կը տիրէ»:

Բայց հետու կատարուած վարդաբարձական չէին մարմիր գաղանթի վայրագութիւնը յազեցնելու: Ապտիլը Համիտ կը սիրէ մտաւորապէս իւր քթին տակ ինչ մը զոհեր ունենալ: Հայերու դէմ խիստ հայածանք մը ահա 15 օրէ տեղի կուենայ Պալատի մէջ իսկ: Անգլոթեմեանութեամբ մը ոստիկանութեան նախարարը կը մերժէ անուշտ առջ իւր բանտարկեալներուն, և այդ հոգը կը թողու անոնց ընտանիքին. այսպէս ինքնաձերք անտուգ պիտի մեռնին կամ անոնց ազգականները իրենց ուսելիք բերելու առթիւ կասկածի ենթարկուելով՝ պիտի երթան անոնց միանալ թրքական զնտաններու մէջ:

Չորեակայեաններուն մէջ կը գտնուի Ամերիկեան քաղաքացի Ալեքսան Արզուեան: Յիշեալը զեռ երիտասարդ, ներկայ եղած էր Պոլսոյ առաջին շարքերուն: Անկէ ետքը թուրքական մեկնելով՝ ազատ երկրի մը քաղաքացի եղած էր՝ չը մոռնալով ընաւ իր ազգակիցներն ու իւր ծագումը: Իր ժամանակն ու ուժերը նուիրեց Հանրութեան ծանօթացնելու անյիշատակ մնացած այն ծայրայեղ ոճի ընտանիքը որոց ինք վկան եղած էր: Ետ մը Ֆրանսացի և օտար քաղաքական անձնաւորութիւններ որոնք պատուի ունեցած են զինքը ճանչնալու՝ խորին յարգանք մը կը տածէին իր նկատմամբ՝ իւր անխնայ անձուրութեանը, ուղղատեսութեանը և քաջասիրտութեանը համար:

Սուլթանը պիտի ուղէ մահու պատժով քաւել տալ անոր՝ իր եղբայրներուն վիճակին շահագրգռուած ըլլալուն յանցանքը: այսպէս նաև ամէն անոնց՝ որոնց իր ձեռքը հասնի եւրոպայի մէջ: Բացէ բաց հաւան հրաման տալու չը պիտի համարձակի թերևս. բայց անօթիւն, ցորտը և տանջանքները նոյն գործը կը տեսնեն:

Արդէն Պոլսոյ Ամերիկեան դեսպանատունը պէտք եղած քայլերը առած է, որպէս զի Ալեքսան Արզուեանը ազատ արձակուի. Բարիքի դեսպանատունէն յանձնուած անցագիրով սենի եղեր: Միացեալ Նահանգներու կառավարութիւնը անշուշտ չպիտի թերանայ աղբու միջոցներով առաջ վարել ձեռնարկուած քաղաքացիի մը կենանքը վտանգէ

(ՂՐՐՐ)

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ

Տ. Պ.

Անցեալները ինչ կը հարցնէք թէ ինչո՞ւ մեր Հայ ընտանիքները իրարու հետ սիրով չեն և թէ ի՞նչպէս կրնանք մեր Հայ ընտանիքան կեանքը աւելի բազմաբնիկ ու ազնուացնել: Երեսուցեք մեր հարցումը շատ կարևոր և կենսական խնդիր մէ՛ք, և պէտք է գրաւէ խորին ուշադրութիւնը ոչ թէ միայն ամէն աշաւուրը և պատուոյ զգացման տէր եղող Հայ անհատի միտքը, բայց նաև մեր Ամերիկայի Հայ լրագրութեան: Բաւական ժամանակէ ի վեր կը գտնուիմ Ամերիկայի քաղաքակրթութեան կեդրոնը Համարուած «Պոսթոն» քաղաքին մէջ, եւ որչափ որ Հետազննին եղած եմ հասկնալով թէ ինչպէս են մեր ընտանիքան կեանքը, առ Հասարակ գտած եմ թուել վիճակի մը մէջ: Կոխներ, ատելութիւններ, գժտութիւններ, տեսակներ ընկերական յիշողութիւն մուտ գըտած են մեր Հայ ընտանիքներու յարկին տակ: Ինչպէս կը լեցուած ըլլալու ազգային, ընկերական ու բարեկամական սիրով: Ինչ ցաւալի վիճակ: Ասանկ օտար երկրի մը մէջ ուր տաճկաստանէն աւելի պէտք կայ ընտանիքան քաղցր յարկերու որպէսզի տառապեալ հայը գէթ ժամանակի մը համար սիրտիւրի ու միտքով թիւն գտնէ, կարծես աւելի նեղութեանց վայրեր դարձած են: Չիրար տակ, նախտակ, բամբակ, իրարու շարնացակամութեան ցանկալ կարծես դասակարգ մը հայերու բոլոր խորհուրդը ու նպատակը կը կարծեն: Ինչի կերակի թէ մեր Հայ ընտանիքներ աւելի գոհացուցիչ ու միտքովարկան զիրքի մը մէջ պիտի գտնուէին այսօր եթէ մեր Հայ տիկիներէն, օրիորդներէն ու երիտասարդներէն ոմանք ինքնակա առջանք երթալով զիրար բամբակալու իրենց ժամանակը աւելի շինէ ու օգտակար խօսակցութիւններով անցնէին:

Բաւական դժուար գործ մը է շիտակը հասկնալու ուղղութեան բերել մէկը որ իրեն հանդիք ուրիշներու ցաւ, տառապանք ու նեղութիւն տալու մէջ կը գտնէ: Հետեւեալ պարզ օրինակը կրնայ ի վեր հանել Հանր. յիշողութիւնը որ մեծաւ մասամբ պատճառ եղած է այսօր Հայ ընտանիքներու իրարու խորք ու տակաւնութեան աշքով նայելուն: Անցեալները պատուաւոր նկատուած Հայ ընտանիքի անդամներէն մին քանի մը մասնաւոր տեղի կայցելէ և ինչ կը կարծէք թէ է իւր խօսակցութեան նիւթը, ուրիշ բան չէ բայց միայն «Բամբակ» ու նախտակները: Վայ այն ժողովուրդին որուն մէջ այսպիսիներու թիւն մեծ է: Միւս կողմանէ երանի այն ժողովուրդին որ զիտէ ժամանակի արժէքը զնահատել: Ձէ՛ք կարծիք որ այս տեսակ նկարագիր ունեցող անձնաւորութիւններ աւելի պատճառ եղած են մեր Հայ ընտանիքներու այժմու բարոյական զաւալի կացութեան քան անոնք որ կապին խղճմը տանքի օրէնքով և ոչ թէ Գրիտտոնութեան ոսկեղէն զողին տակ լըրը ու բանտարկու լեցուներով: Կարծեմ չէք խոր

Լու համար ուրիշ շատ մը տուններ ալ փրցուեցին: Ամբողջ կորուստը 1050 օսմ ոսկի կը հասնի: Այս պատճառաւ բազմաթիւ ընտանիքներ անպատասխար ու թշուառ մնացին: 116 ընտանիք լեռներու մէջ կը բնակին տուն տեղ չունենալուն համար:

Ռուսական զեկուպի միջամտութեամբ ձերբակալուած Հայերէն 40 րազատ արձակուած են: Հոկտ. 22 ին և սքտորուածներէն 60 ի շտի այ Պոլսի վերադառնալու արտօնուեր են:

ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅԵՐԸ: Բեղրպուրէն կը հեռագրուի թէ Ռուսիոյ Հանրային կրթութեան նախարարը պատշաճ դատած է Հայոց հոգեւորական դպրոցներէն այ վերցնել Հայ Լեզուա դասաւանդութիւնները: Կրօնագիտութիւնը միայն հայերէն պիտի աւանդուի:

Հեռագիրը որ այս շատ ծանր լուրը կուտայ լակոնական է: Հայոց բոլոր դպրոցները արդէն ռուսացած էին: Հինգ վարժարան իբր կը նրանց կը մնային անձեռնմխելի: Հաւանական է որ Հիմախայը Հասարակութիւններն են ռուսացեալները:

Միւնիտի ժամանակ լուր կայ թէ Կովկասի կառավարչութիւնը լուծեր է Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը: Այս մարմինը քսան տարի է ի վեր գիտական, գրական, պատմական գործեր հրատարակելով և աժանագին վաճառելով մեծապէս կը նպաստէր Ռուսիոյ Հայոց քարագման և Հայ Լեզուին պահպանումին: Բարեգործական ընկերութեանէն յետոյ առ այ զնաց:

Ա Ղ Դ

Ամէն կիրակի առաւօտ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ժամերգութիւնը կը կատարուի Տարթմիթ Փողոցի Եպիսկոպոսական Չրչի Մատրան մէջ: Բարբառը կը խօսուի: Կը հրաւիրուին քարեպաշտ ժողովուրդը ներկայ գտնուիլ եւ օգտուիլ:

Հողաբարձութիւն Պոսթոնի

M. HARPOOTLIAN, P. O. Box 470, Worcester, Mass

ՍԵՂԱՆԱՌՐ ՓՈՌ ԳՐՈՅ

Տաճկաստանի բոլոր քաղաքներն զըրամ կը փոխադրենք: Մեր տան կեդրոնաւորը են Կ. Պոլսի ու Խարբեք մեծ: Յարութիւն է Ֆ. Սարբութեան և եղբարք մեծ գումարով փոխ գիր առողջներուն մասնաւոր զեղը կը ներք: Ամէն գծի վրայ նաւային տոմակ կուտանք. տոմակ ու դրամ հեռագրով կը զրկենք Մարտէյլ: Մեր խանութիւն Հանցէն է 57 Hanover Street, Միւնիտի Սարբութեան Ուսար

ՔԱՂԱՔԱԿԱՅ

ՊՕԵՐՆԵՐԸ

Պօէրներու նախագահ Գրուկը Եւրոպա կը պտտի, առանց պետութեանց կողմանէ պաշտօնապէս ճանչցուելու:

Վերջերս Պօէրները կրկին պատերազմական մեծ ոգևորութիւն ցուցնել սկսեցին:

Պարսը օնէն 19 Սեպտ. թուականաւ հետեւեալը կը գրեն:

Հոս խորհրդաւոր պատմութիւն մը կը պտտի. քանի որ կայ անձանօթ մը տաճկական հիւպատոսէն ինքրեց որ իրեն ծածկագիր մը տան որով կարեն իր ուղղակի Սուլթանին հետ բանակցիլ: Հիւպատոսը սուլթանին կիմացունէ այդ առաջարկը և սուլթանը հաճութիւն կուտայ որ ծածկագիրը իրեն հաղորդուի: Անձանօթը այն ժամանակ Սուլթանին կը հեռագրէ թէ 6 Հատ անիշխանականներ Պոլսի կը գտնուին և որոնցմէ մին Պրէսպի եղբայրն է, ու ու կառավարիչ գանդը ցոյց տալ իրեն, եթէ 4500 Ֆրք. ճանապարհածախս տրուի:

Թէպէտեւ այս պատմութիւնը խաղաբարութիւն մը եւ կամ խաբէութեամբ դրամ շորթելու երեւոյթը ունէր, սակայն և այնպէս կերակայ որ հիւպատոսը հըրա-

ման ստացած է 4500 ֆրանքը վճարելու և անձանթին խոստանալու որ 100000 ֆրանք ալ իբր նուէր պիտի տրուի իր տուած տեղեկութիւններով անընդհատ կանները ձերբակալուին:

ՁԻՆԱՍՏԱՆ

Որևէ վերջնական համաձայնութիւն կայացած չէ պետութեանց մէջ Ձինաստանի նկատմամբ: Կըսուի թէ պետութիւնը համաձայնեալ են պահանջելու որ ամէն բանէ առաջ խոստովանանք պարտադրուի եղող պետական անձնաւորութիւնները գլխատուին:

Ոչինչից անի Ձինական դեսպանը խօսք հաննց թէ խոստովանանք պատասխանատու պետական անձերէ ոմանք կայսերական կառավարութեան կողմանէ դատաւճիտ ստացած ըլլանուն պատճառաւ անձնապանութիւն գործեր են:

ԳԻՐՄԱՆԻԱ

Գերմանիոյ նախարարապետ Հոֆմանը իշխան հրատարակեց, որուն շարժումը կը թուի ըլլալ, Ձինական գործերու վերայ Գերմանո-Ռիտանական դաշնակցութիւնը: Կըսուի թէ այս գործողութիւնը կատարուած է առանց իր գիտութեանը, կայսրը և արտաքին գործոց նախարարը առանձին կատարեալ են յիշեալ բանակցութիւնները: Թէ Հոֆմանը իշխան Ռուստոյի ու Ֆրանսայի քաղաքականութեան մը կը հետեւէր և թէ կայսրը առաջիկայ իր զօրքերը փեքիկէն հանելու ու մարտախառն վայտերով միջազգային բանակին ընդէ: Հրամանատար կարգուելուն դէմ առաջիկայ կախապանութիւնը ոչ բարեկամական նկատած էր. ու այդ իսկ պատճառաւ Անգլիոյ բարեկամութիւնը միտուեց:

Կայսերական իրատէմը կարգիլէ թուրքիոյ մէջ աստեղագաղտութիւնը և արևապայտու թիւնը:

Եւրոպիոյ ուշադրութիւնը Ձինաստանի վրայ գրաւուած ըլլալուն համար, կը վախճուի որ Մակեդոնիոյ մէջ խառնակութիւններ ծագին. ուստի սուլթանն ինչպէս հրամաններ գաղտնի են Սելանիկի և Մանիսթրի կուսակալաց որ ամէն պաշտպանողական ու յարակողական միջոցներով՝ զսպան որևէ խառնակութիւն: Ինչորոշեալ նաև Պուլկար էկզարքէն որ իր ազդեցութիւնը գործածէ ինպատ խաղաղութեան պահպանման:

ՆԱԽԱԳԱՀ ՄԱՔԻՆԼԻԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի պատմութեան մէջ եթէ ոչ ամենէն բարձր. գէթ բարձրագոյն տեղերէն մին պիտի գրաւէ անցեալ երեքքաթի օր կատարուած նախադահական քննութեան քուէարկութիւնը:

Սետանի մը կամ վաթերուի մը ճակատամարտէն աւելի տաք ու խանդավառ կռիւ մը կը մղուէր ուսման վարձանի մը և հանրապետական կուսակցութեան միջև. թնթանթնի, սուրի, գնդակի, հուրի ու վառօդի տեղ կը գործածուէին թուղթը, գրիչը, մեկանը. Լետիթ առմերու տեղ քուէատմանը արկղներու յատակը կը թափէին. որոտուներու տեղ ժողովուրդին ձայնը կարճանագրուէր լռիկ. ու քանի մը ժամ մէջ ճակատամարտը վերջացաւ. մէկ կողմը պարտուած՝ ու միւս կողմը յաղթող յայտարարուեցաւ. Հանրապետականները յաղողած էին, Նախ. Մաքքիները վերջնապէս:

Չորս տարի առաջ մէկ նահանգ միայն կար ուր կիները իրաւունք ունէին իրենց քուէովը մասնակցիլ նախադահական ընտրութեան. այս ընտրութեան ժամանակ չորս նահանգներու մէջ կիները վայելեցին նոյն իրաւունքը—Այտաւոյ, Բոլորատոյ ետեթայ և Ուալտաի:

Միացեալ Նահանգաց Նախադահական ընտրութեան օրը. Նոյմ. 6ին գուժարեցաւ Բուպայի ընդէ. ազգային ժողովը Բուպայի համար Մահաճանադրութիւն մը քուէարկելու պաշտօնով: Ժողովը կը բաղկանայ 31 երեսօխոսաններէ որոց կը նախադահէ կողմին ընդհանուր կառավարիչը Զորապետ Վուտ: Երեսօխոսանները քաղաքական տարբեր կայնացներ

ուներ թէ և բայց ամէնքն ալ կի միարանին սա կէտին վրայ թէ Բուպա ազատ և ինքնօրէն կառավարութիւն մը ունենալու է:

— Ամերիկեան կառավարութիւնը կը փափաքի որ անկախ Բուպայի օտար յարաբերութիւնները Ուաշինկթօնի վերին հսկողութեան ենթարկուին. կը հասկնայ նաև թէ գծուելիք Մահաճանադրութիւնը պէտք է ենթարկուի Մ. Նահանգաց կառավարութեան վաւերացմանը:

— Բուպայի հանրային դպրոցներուն մէջ ուսանողներուն թիւը բարձրացած է 50000 էն 150000 ի և վեց ամիսէն մինչեւ 250000 ի պիտի հասնի:

— Մաքքիները վերջնապէս փրկեց երկիրը այն տակնուվրայութենէն որուն պիտի ենթարկուէր Պրայընի ընտրութեամբ: Բաղադրականութեան փոփոխութիւնները միշտ անվստահութեան խայթ մը կաւելցնեն գործի աշխարհին մէջ ոչ այնչափ իրական աղետալի հետեւանքներու համար. որչափ անձանթ կարելութիւններու պատճառաւ:

Բ Ա Ց Յ Ի

« ԴԱԻԻԹ-ՌԻԿ » Ա. Բ. Կ. Հատոր վերջաբանով և « ԿԱՅՄԵՐ » Ն. Բ. Հատոր լրակատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագրին է 5 Շիլին:

Հոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս՝ կուղարկուին բաժանորդներին շտապ « ՍԱՄՈՒԷԼ » եղաւ:

Բաժնի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղարկի դիմեն մեզ: Մեզին կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Մերենցի, Պետրոս Գուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ: Հասցէ:

MME. RAFFI, 47 Uxbridge Road, London, W., England.

ԿՈՒՉԵՐ ԿԱԼՈՒՄՈՒ ԳՆԵԼ

Անոնք որ քաղաքին մէջ կամ քաղաքէն դուրս որ և է կարուած գնել կուղան թող դիմեն հետեւեալ հասցէին միջնորդ արտի. և տան փաճառուով:

J. H. DONELLY,

REAL ESTATE

City and Country Property, Room 37

476 Main St., Worcester, Mass.

Նմուշի համար հեռուեալ օրֆնակը կուտանք—

Ա. 20 էքր պարունակող արտ մը որուն մէջ կայ 1 երկյարկանի տուն 40 ոտք երկայն 30 ոտք լայն ախոռ մը հաւտուն մը, կրնայ պահուիլ 3 կով, 1 ձի երկաթուղւոյ կայարանէն կէս մղոն անդին, գինը 1300 տոլար:

Ա. 3 թեքնեմենթով տուն մը Ռասթ Միլլարի փողոց, վարձքը ամսական \$21 գինը 2100:

Ճ Ի Շ Տ Կ Է Ս Գ Ե Ո Վ

ԱՌ 26-ՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Անգլիերէնէ Հայերէն

Գիշերային վարժարաններու բացման առթիւ և ի դիւրութիւն աղքատիկ ու խնայել սիրող ուսանողներու, մեք բաւարաններու թղթակազմները, զորս նոր ստացանք կազմատունէն, պիտի վաճառենք ձերս 45 ս Գնով, հատը \$1,25: Ծանապարհածախսը մեր վրայ է: Գնելու համար դիմել առ

B. R. TOROSIAN, West Hobokn, N. J.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԾԱՇՄԱՐԱՆ

ՏՈՆԱՊԵՏ ԾՆԱԼԵԱՆ 38 Նիւտոն փողոց

Պօսթոն

Մենք ալ աժան ճաշ կուտանք, սակայն յաճախողներ գոհացունելու համար աւելին պէտք է. մաքուր ճաշարան, մաքուր արարանք, վարպետ խոհարար, համեղ կերակուր: Մեր ըսածը հաստատելու համար մէկ այցելութիւն մը բաւական է:

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ

Տողթոր Հ. Ս. ձէլախան, կառավարութեան վկայեալ բժիշկ, իւր օֆիսին մէջ կը գտնուի

45 ս օրին 12 է մինչև 1. Գիշերները 7 է մինչև 9.

Եւ պատրաստ է իրեն դիմող հիւանդ աղքայիները ամենայն խնամօք դարմանել:

Հասցէն է DR. H. S. JELALIAN, 11 Dartmouth St., BOSTON.

ԱՆԱՀԻՏ

Հանգէս Աղապին, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաւանորդագրութիւնը:

Հասցէ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ 6 Place de L'odeon Paris

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՇՄԱՐԱՆ

(11 Բաւլ փողոց Ուտար)

Շարաթական պօրտը \$1,75 ս. է իւրաքանչիւր ժուճին երեք պնակ կերակուր կը տրուի, մսեղէն, բանջարեղէն և սառնուլուղ. առաւօտները միայն դաւաթ մը կաթ, իսկ եթէ մէկը պրոզայ կամ հաւկիթ ուտել ուղէ այն ստեն \$2 պիտի վճարէ: Կիրակի առաւօտները մէկ պնակ միւս պրոզայ կը տրուի, նաև փելերը կը պատրաստուին 5 տեսակ, միս, պանիր, փայ, մրգեղէն և առատ հաց. անգործները եթէ ժամանակին կանոնին համեմատ ճաշի գան \$1,50 միայն վճարելու են: Սենեակ և կամ ամբողջ յարկի տուն ուղղութեամբ ինձի դիմելու են: Այս հրատարակութեան թող չի ցաւին ճաշարանային տները, քանզի ես իրենց պէս խոհարար կամ գործուոր չեմ պահէր, բոլոր գործերը ես կընեմ ատոր համար կրնամ վերի գնեցող պահել ժողովուրդը. ով որ կուզէ համեղ կերակուր ուտել թող մեղի հրամէ: Նաև ուտելու իւր կը ծախեն փառնուր 6 սէնթ: Թարգէս Մամիկոնեան

ՄԱՍԻՍ ՆՊԱՐԵՆԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Massis Grocery Co. 38 Hudson St., Boston Mass.

Մեր անցեալի փորձառութիւնը եւ թիւրքիոյ հետ ուղղակի առևտրական ճիւղեր հաստատելը շատերու հետ մըրցելու դիւրութիւն կուտայ մեզ: Մենք ստեւտուրի շատութեան մէջ կը փնտռենք մեր շահը:

Հետեւեալ ապանքներու գները ապացոյց են մեր խօսածին, Ուտարի պատուական պրոզայ և ծեծած 3 սէնթ փառնուր կորկոտ 6 ս. պամա 25 ս. աղցուած կաթ միք ոսպ 6 ս. շաղցուած 5 ս. սրտեմ 5 ս. շերիա և մաքարոն 5 ս. սայցա մեծ քան 23 փորթ 6 ս. մուխալար 3 ս. սև զէյթի 9-10 ս. խաշեր պանիր 32 ս. դահին հալվախի 13 ս. դահին 16 ս. աղը դրած տերև 10. Թարմ պանիր, Կ. Պուճի եկած լոքուճ նա և տեղական լոքուճ, թիւրքի ալէն եկած պատրմայ, ֆըթթը, շերիա լեպլեպի, լեպլեպի տեսակներով: պատմէ շէքերի, Տաճկաստանի մեղր, ուսուպ անուշ կարագ, գոլթուճ և աղը (ամենայն) պատեղ, բոճիկ: Չաման քիճմ քիճիս, կարմիր պիպէս, հինա, խոնկ, խաշվէի տէրմէն, ճաղվաներ, Թուրքուներ, նարկիլաներ, մանր աղցուած սուրճ թրիթուլթ, սիկարի թուղթ (Հիւանդանոցի): Սիգանի և փիանոնի մետաքսեայ ծածկոցներ, ընձայի վերարեքալ այլ եւ այլ մետաքսեղէնք: Չանազան տեսակ փաթուճներ: Հոս պատրաստած ամենալաւ պատրմայ 30 ս. փառնուր: 3 տալեքէն աւելի ապրանք գնողաց էքսքէտը մենք կը վճարենք (միայն Պոստոն և չրջակայից համար) իսկ հեռի տեղերու համար 3 ս. գեղջ տալերին մեր առևտուրը կանխիկ է միշտ. դուրսերը Օ. Օ. Ս. կը զրկենք. Հալվախ սապոն 5 ս. կտորը Կիրիթի սապոն 7 ս. կտորը: Մեծ քանակութեամբ գնողաց մասնաւոր գեղջ օրտըրները շուտով կը զրկուին ըստ կանոնի

ԱՉԴ

Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՆԵՆԻ ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնը կը կատարուին փութով և խնամով: ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԱՐԱՍ ԱՍՔԱՆԱՉ

Մեր Հասցէն է Tyler Grocery Co. 113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԻՈՐ ԱՉԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Պայսերի Պատրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փառնուր 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին:

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ 113 TYLER ST BOSTON MASS

231 Իսթ 28 րդ. փողոց

ՆԻՒ-ԵՈՐԳ

Մ. Գաղանձեան և Պ. Մուշեղեան:

Կը վաճառենք տեղական ու արևելեան ամէն տեսակ նպարեղէններ. Հօլմէյլի գնով. Գիշերէք մեզի անձամբ կամ նամակաւ: շուտով կը զրկենք ուր որ ուզուի:

Ահա մեր գներուն ցանկը իւրաքանչիւր փառնուր սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուտարի պոռլոքը շատ մաքուր 3 1/2. Հայկական պանիր 10. Լօքուճ շէքերի 10. Շամ ֆրախի 26. Պամեայ 28. Հեթմակ ֆրախի 5. Խուշ 18. Չամիչ 8. Սալոր 5. Պայսի 15. Ընկոյղ 14. Յնտիս 13. ինուրմա 5. Լեպլեպու շաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիսուր 5. Գառնի միս տեղս մորթուած 7. Պայսերի պատրմայ և Սուճուր 35. Թէ աղի և թէ անլի լեպլեպու 15. Լեպլեպուին ամենալաւը 28. սէնթ ամէն մէկ փառնուր: Ունինք նաև Բիմիսի. Չաման. Տարչին. Լեմոն թուղթ և տեղական ապրանք ամէն տեսակը:

ԳՐԱՎԱՅՈՒՄ

ԳՐՈՒՄԿԱՆ

Մենք Գրավաճառական գործակալութիւնը կը շարունակենք կազմուելու թէ թիւրքիոյ թէ Ռուսիոյ և թէ Եւրոպիոյ բոլոր Հայ տպարաններու հետ:

Ըստանձնած եմ նաև Իրաւունքի գործակալութիւնը. ամէն անոնք որ կը փափաքին կամ հատով և կամ տարեկանով ձիւրուներ ստանալ, կրնան դիմել ինձի դրամը կրնաք զրկել Մին Օրտով:

Պ. Պետրիչեան Անձնապէս դիմել ուղղութեամբ կրնան գալ 99 Կորհամ փողոց

Նամակի Հասցէն է 390 P. O. Box, Lowell, Mass.

Պատու ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ միայն փորձեալ և անխաղաղ են, այլ և դիւրամտեղիկ են ամէն դասակարգի անձանց:

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բալթի-Ֆորնիլիսի և սառնակական ամէն տեսակ փափաքողաց գներու ցուցակը կը զրկուի առանց ս' և է ծախի:

Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ և փութով: Բաղադրին մէջ ապրանքներն իր կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածն ունի ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպելիքներ կը վաճառուին թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլի անտրիթէյլ)

Մեր յաճախողքը երբ չի հաւնի իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք դայնս փոխել, եթէ պակաս ու փառնուր չըլլան:

Ըմպելիքներ լ. վաճառուին չիւրով, կալընով, սակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 13 կամ 24 շէքեր:

Գիւնիկ յիւսկ հասցէին կամ Ե. Ս. ՍԷՄԷՐՃԵԱՆ, 535 ՈՒԷՍՏ 57 րդ. փողոց, Ն. Ե.